ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հուլիսի 2019 թվական N 72-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 10-ի թիվ 04-Ա որոշումը , Մայակովսկի համայնքի բնակիչ Սաշա Գրիգորյանի դիմումը ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը,

որոշում եմ՝

1. Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից Սաշա Գրիգորյանին տրամադրել 15 000/ տասնհինգ հազար/դրամ դրամական օգնություն.
2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԱԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.հուլիսի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք. գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հուլիսի 2019թվական N 73-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հայգ Տակորյանի լիազոր անձ Հրանտ Ռաֆիկի Սիմոնյանի (ծնված՝ 1955 թվականի հունվարի 23-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Հայգ Տակորյանին պատկանող Մայակովսկի համայնքի 11-րդ փողոցի թիվ 5 հասցեի տնամերձ հողակտորում 2008 թվականին ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 2307464 վկայական, տրված 2007 թվականի մայիսի 11–ին, «ԱԼԲԻՌԱՖ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հուլիսի 2-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքիկադաստրային քարտեզի և «ԱԼԲԻՌԱՖ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հայգ Տակորյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 11-րդ փողոց թիվ 5 հասցեի տնամերձ հողակտորում 2008 թվականին ինքնակամ կառուցել է բնակելի տան նկուղի աստիճաններ՝ Տարտ=4.1 քառ.մետր, բնակելի տան առաջին հարկի աստիճաններ՝ Տարտ=29.7 քառ.մետր ,հարթակ՝ Տարտ= 30.1 քառ.մետր , բնակելի տան ձեղնահարկ՝ Տարտ=183.6 քառ.մետր, ծածկոց՝ Տարտ=15.4 քառ.մետր, ինչպես նաև ինքնակամ բացել է յոթ պատուհան և չորս դուռ :

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Հայգ Տակորյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 11-րդ փողոց թիվ 5 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների , ինքնակամ բացված յոթ պատուհանի և չորս դռան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

որոշում եմ.

1.Հայգ Տակորյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 11-րդ փողոց թիվ 5 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տան նկուղի աստիճանները՝ Տարտ=4.1 քառ.մետր, բնակելի տան առաջին հարկի աստիճանները՝ Տարտ=29.7 քառ.մետր ,հարթակը՝ Տարտ= 30.1 քառ.մետր , բնակելի տան ձեղնահարկը՝ Տարտ=183.6 քառ.մետր, ծածկոցը՝ Տարտ=15.4 քառ.մետր, ինչպես նաև ինքնակամ բացված յոթ պատուհանը և չորս դուռը ճանաչել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 552090 (հինգ հարյուր հիսուներկու հազար իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը ,և յոթ հատ բացված ինքնակամ պատուհանների , չորս հատ ինքնակամ բացված դռան համար 11000 (տասնմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.հուլիսի 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հուլիսի 2019 թվական N 74-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի,

որոշում եմ

1.Քաղաքացի Արման Միսկարյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքում գտնվող հողամասում (կադաստրային ծածկագիր 07-043-057-0017) տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան , ավտոտնակի և քարե պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.հուլիսի12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հուլիսի 2019 թվական N 75-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի,

որոշում եմ.

1.Քաղաքացի Անդրանիկ Գևորգյանին տալ պարիսպի և օժանդակ շինությունների կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի համայնքի 12-րդ փողոցի թիվ 62 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Անդրանիկ Գևորգյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.հուլիսի12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հուլիսի 2019 թվական N 76-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները՝ *որոշում եմ.*

1.Մայակովսկի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 10-ի N 38-Ն և 40-Ն որոշումները պաշտոնական հրապարակել 2019 թվականի հուլիսի 16-ին :

2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Նորմատիվ իրավական ակտը հրապարակելու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.հուլիսի 15